

ՃԵՐՄԱԿ ՎԱՐԴԸ



Թուփերով լի այգիի մը մէջ, տարբեր-տարբեր խոտերու ընդմէջէն, անակնկալօրէն յայտնուեցաւ ձիւն-սպիտակ վարդ մը, որուն թերթիկները կը շողշողային արեւուն տակ:

Վարդը ծաղկած օրէն տակաւին ինքզինք չէր տեսած, ուստի՝ չէր գիտեր, թէ որքա՞ն գեղեցիկ է ան: Ան մինչեւ թոռմիլը իր կեանքը ապրեցաւ, առանց գիտնալու թէ իր շուրջ գտնուողները հիացած էին իր գեղեցիկ տեսքով, անուշ բուրմունքով եւ նուրբ թերթիկներով: Ան չէր գիտեր նաեւ, թէ բոլորն ալ լաւ խօսքեր կ'ըսէին իր մասին:

Արեւոտ օր մը, երբ փոքրիկ աղջնակ մը կը զբօսներ այգիին մէջ, ու ինքնիրեն կը մտածեր թէ որքա՞ն հաճելի է մայր բնութեան մէջ քալելն ու զանհկա վայելելը, յանկարծ նշմարեց ճերմակ վարդը, որ միս-մինակ կանգնած, սկսած էր թոռմիլ:

- Արեւը կիզիչ է արդէն, եթէ զինք այստեղ ձգեմ մինչեւ վաղը կը թոռմի ու կը մեռնի,- մտածեց ան ու վարդը առաւ եւ իր հետ տուն տարաւ ու զայն տեղաւորեց գեղեցիկ ծաղկամանի մը մէջ:

Այն ժամանակ վարդը առաջին անգամ ըլլալով ինքզինք տեսաւ պատուհանին արտացոլանքէն:

- Ասիկա ե՞ս եմ,- մտածեց ան:

Կամաց-կամաց անոր թոռմած տերեւները կրկին սկսան բարձրանալ, նորոգուիլ եւ նայիլ դէպի արեւը, մինչեւ որ անոր վերադարձաւ իր նախկին վիճակին: Ճիշդ նոյն ատեն գիտցաւ թէ ինք իսկապէս շա՛տ գեղեցիկ է ու մտածեց.






- Վա՛յ, ինչպէ՞ս մինչեւ հիմա չէի հասկցած թէ ո՞վ եմ ես ու որքա՞ն գեղեցիկ եմ: Ինչպէ՞ս այս աստիճան կոյր էի:

Եւ այսպէս՝ վարդը հասկցաւ, թէ այդքա՞ն ժամանակ իր օրերը անցուցած էր առանց գիտնալու իր իսկական արժեքը:

Ուրեմն՝ սիրելի՛ փոքրիկս, եթէ իսկապէս կ'ուզես գիտնալ թէ ո՞վ ես դուն, մոռցի՛ր շուրջդ ամեն բան ու ուրիշներէն զնահատանք մի՛ սպասեր, պարզապէս՝ նայէ՛ սրտիդ ու կը հասկնաս ամեն ինչ:


Թիւ 4 ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵՆ-ՇԱՀԻՆԵՆ
ՆԿԱՐԱՍՏՈՐԵՑ՝ ՌԱՅՖԻ ՔԵՇԻՇԵՆ

Կրնա՞ս լուծել:

 = 6
 = 11
 - 3 = 
 =  + 
 = ?

Պատասխան: 23

Կրնա՞ս օգնել ձկնիկին մեծ ձուկերեն փախչելու:



Ամբողջացո՞ւր պատկերը, ապա՞ն գունաւորէ՛:



Գունաւորէ՛ հետեւեալ պատկերը նախասիրած գոյներով:



ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

Յովհաննես Թումանյան

Այս անգամ փոքր եղբայրը կ'ելլէ կ'երթայ այդ նոյն հարուստին մօտ ու կը մտնէ իբր ծառայ: Հարուստը դարձեալ որպէս պայմանաժամ կը նշանակէ զարնան կկուիին կանչը ու պայման կը դնէ, որ եթէ ծառան բարկանայ՝ հազար մանեթ տուգանք տայ, իսկ եթէ ինք բարկանայ, հազար մանեթ ինքը տայ եւ այդ օրէն ծառան ազատ ըլլայ:

- Զէ՛, ատիկա քիչ է,- կը հակառակի տղան: Եթէ դուն բարկանաս՝ դուն ինծի երկու հազար մանեթ պիտի տաս, եթէ ես բարկանամ, ես քեզի երկու հազար մանեթ պիտի տամ կամ քսան տարի ձրի պիտի ծառայեմ:

- Լա՛ւ,- կ'ուրախանայ հարուստը: Կը համաձայնի ու հիմա ալ փոքր եղբայրը կը մտնէ ծառայութեան:

- Հէ՛յ, ոտքի ե՛լ, մթնցաւ, ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց... վա՛յ քեզ այստեղ դրկողին վիզը կոտրի, վա՛յ կու կերածդ ալ քիթէդ բերնէդ գայ, քու ըրածդ ալ... այս ի՞նչ փորձանքի մէջ ինկայ...,- կը սկսի գոռոզալ յուսահատած տերը:

- Հը՛, չըլլայ թէ կը բարկանաս,- գլուխը վերմակով կը ծածկէ ծառան:

- Զէ՛, ո՞վ կը բարկանայ, ես այն կ'ըսէի թէ մթնցած է, տուն երթալու ժամանակն է:

- Հա՛, այդ ուրիշ բան է, երթանք, ապա թէ ոչ՝ մեր պայմանը պայման է: Վա՛յ անոր որ կը բարկանայ:

Կը հասնին տուն: Կը տեսնեն թէ հիւր եկած է: Ծառան կը դրկեն, ըսելով՝ «Չե՛ս, ոչխար մորթէ՛»:

- Ո՞ր մէկը:

- Որ մէկը որ հանդիպի:

Ծառան կ'երթայ: Քիչ ետք յուր կը բերեն հարուստին. «Շո՛ւտ հանդիպիր, ծառադ ամբողջ հօտդ կոտորեց»: Հարուստը կը վազէ, կը տեսնէ որ ճիշդ է, ինչ որ ոչխար ունի, ծառան բոլորն ալ մորթած է: Խելագարած կը գոռայ.

- Այս ի՞նչ ըրած ես, այ անաստուած, քանդուի տո՛ւնդ, ինչպէս քանդեցիր իմ տունս...

- Դուն ըսիր. «Որ ոչխարը որ հանդիպի, մորթէ», ես ալ եկայ, բոլորին հանդիպեցայ, բոլորը մորթեցի: Ուրիշ անելի-պակաս ի՞նչ ըրած եմ,- հանգիստ կը պատասխանէ ծառան,- բայց կարծես դուն կը բարկանաս...



- Զէ՛, չեմ բարկանար, միայն մեղքս կու գայ, որ այսքան կենդանի մեռաւ...

- Լաւ, քանի որ չես բարկանար, կը շարունակեմ ծառայել:

Հարուստը կը մտածէ ի՞նչ ընէ, որ այս ծառայէն ազատի:

Պայմանաժամ դրած է զարնան կկուիին կանչը, մինչդեռ տակաւին նոր ձմեռ մտած են, ո՛ւր են զարունն ու կկուն...

Կը մտածէ՛ ու կը մտածէ: Միտք մը կը յղանայ: Իր կինը անտառ կը տանի, ծառի մը վրայ կը հանէ ու կը պատուիրէ, որ «կուկու» կանչէ: Ինք կու գայ, կը տանի ծառան. «Եկո՛ւր անտառ որսի երթանք»: Հազիւ անտառ կը մտնեն՝ կինը ծառի մը վրայէն կը կանչէ. «Կուկո՛ւ, կուկո՛ւ...»:

- Ըհը՛, աչքդ լո՛յս,- կ'ըսէ տերը ծառային,- կկուն կանչեց, ժամանակդ լրացաւ...

Տղան կը հասկնայ տիրոջ խորամանկութիւնը:

- Զէ՛, կ'ըսէ ան,- ո՞վ լսած է, որ տարուան այս եղանակին, ձմրան կիսուն, կկու մը կանչէ: Ես պէտք է սպանեմ այս կկուն: Ի՛նչ տեսակ կկու է եղեր ասիկա...

Հազիւ այս կ'ըսէ, հրացանը ձեռք կ'առնէ՝ կ'ուղղէ դէպի ծառը: Տերը գոռալով կը կանգնի հրացանին դէմ.

- Վա՛յ չգարնես, Աստուծոյ սիրոյն... անիծեալ ըլլայ քեզի հանդիպած օրս, այս ինչ փորձանք էր, որ եկաւ գլխուս...

- Հը՛, չըլլայ թէ կը բարկանաս...

- Հա՛, եղբայր, հերիք է, եկո՛ւր ինչ տուգանք որ տալիք եմ՝ տամ, քեզմէ ազատիմ: Իմ դրած պայմանն է, ես ալ պէտք է ենթարկուիմ անոր: Հիմա նոր կը հասկնամ հին առածը «Մարդ ի՛նչ որ ընէ, իրեն կ'ընէ»:

Այսպէս, հարուստը կը խելօքնայ, իսկ փոքր եղբայրը կը պատռէ մեծ եղբոր պարտքի թուղթը, կ'առնէ հազար մանեթ տուգանքն ալ ու կը վերադառնայ տուն:

(Վերջ)

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՕԴԱՆԱԻՐ

1969-Էն սկսեալ այս տիտղոսը կը պատկաներ Պոյիսկ 747 օդանաւին, սակայն տասը տարուան աշխատանքէն ետք, 2006-ի Յունուարին մեջտեղ կու գայ «Էրպաս»-ի ամենէն նոր օդանաւը՝ A380, որ կը տիրանայ աշխարհի ամենէն մեծ եւ հզօր օդանաւի տիտղոսին:

Օդանաւը կ'արտաբերէ օդը նուազ ապականող կազեր, ինչպէս նաեւ նուազ կ'աղմկէ եւ շատ աւելի հանգստաւետ է: Ան օժտուած է մարզանքի, մանուկներու խաղաղայրի եւ պիլիարտի սրահներով:



Էրպաս
A380



Պոյիսկ 747